ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 189-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«***Հոդված 189. Զանգվածային լրատվության միջոցի թողարկման տվյալները չներառելը կամ պարտադիր օրինակները չուղարկելը ~~կամ օրենքով արգելված աղբյուրներին հղում կատարելը~~ կամ զանգվածային լրատվության միջոցի՝ ֆինանսա~~վորման~~կան ~~աղբյուրների թափանցիկությանն ուղղված~~ հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետներում չհրապարակելը***

1. Զանգվածային լրատվության միջոցի՝ ~~տարածումը, որում ներկայացված չեն օրենքով սահմանված տվյալները կամ զանգվածային լրատվության միջոցի ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությանն ուղղված~~ ֆինանսական հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետում չհրապարակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականցնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

~~2. Զանգվածային լրատվության միջոցի տարածումը, որում ներկայացված չեն օրենքով սահմանված տվյալները կամ զանգվածային լրատվության միջոցի օրենքով արգելված աղբյուրներին հղում կատարելը~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականցնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկից հինգ հարյուրապատիկի չափով:~~

~~3~~2.Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ~~վեց հարյուրապատիկից հազարապատիկի չափով:~~ հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով:

~~4.~~3. Նյութական կրիչի վրա թողարկված զանգվածային լրատվության միջոցի տարածումն առանց օրենքով սահմանված պարտադիր օրինակներն ըստ պատկանելության ուղարկելու՝

առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականցնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

~~5.~~4. Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:»:

5. Զանգվածային լրատվության միջոցի տարածումը, որի թողարկումը չի պարունակում օրենքով սահմանված թողարկման տվյալները՝

առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականցնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

6. Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 223[1] հոդվածից հանել «189-րդ եւ» բառերը:

~~***Հոդված 3.*** Օրենսգրքի 224-րդ հոդվածը «186 (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում),» բառերից հետո լրացնել «189-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերը» բառերը:~~

Հոդված ~~4~~3. Օրենսգրքի 244[2] հոդվածը «170[13] հոդվածներով» բառերից հետո լրացնել «189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասով» բառերով:

Հոդված ~~5~~4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: